ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2014թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ»
ՑԱՆՑԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ անդամակցելու «Տեղական իշխանությունները հանուն կայունության» ցանցին:

2. Սահմանված կարգով Երևան համայնքի բյուջեում նախատեսել «Տեղական իշխանությունները հանուն կայունության» ցանցի անդամության վճարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ» ՑԱՆՑԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղական իշխանությունները հանուն կայունության ցանցը հիմնադրվել է 1990 թվականին Նյու–Յորքում՝ որպես «Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդ՝ International Council for Local Environmental Initiatives-ICLEI)» «Տեղական իշխանությունները հանուն կայունության» ՄԱԿ–ի համաշխարհային կոնգրեսի ժամանակ, որտեղ ցանցին միացան աշխարհի շուրջ 1000 քաղաքապետարաններ և մունիցիպալ կազմակերպություններ: 2003 թվականին ցանցը վերանվանվել է «Տեղական իշխանությունները հանուն կայունության (Local Governments for Sustainability)» ցանցի, սակայն պահպանել է ICLEI հապավումը:

«Տեղական իշխանությունները հանուն կայունության» Local Governments for Sustainability-ICLEI)» ցանցն ամբողջ աշխարհում գործող կայուն զարգացման ուղին որդեգրած քաղաքների միակ ցանցն է: Կազմակերպությունը նպաստում է տեղական իշխանությունների մուտքը դեպի ՄԱԿ, Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա, կենսաբազմազանության պահպանմանն ուղղված նախաձեռնություններ:

ICLEI ցանցը գրեթե բոլոր մայրցամաքներում հիմնադրել է գրասենյակներ և իրականացրել միջոցառումներ: Ներկայումս ցանցը ստանում է աջակցություն ՄԱԿ–ից և ԵՄ–ից: Ցանցը ոչ առևտրային կազմակերպություն է, որի բյուջեի 10%-ը կազմում են անդամավճարները, իսկ մնացածը կազմում են այլ նախագծերի միջոցով ձեռք բերված ֆինանսավորումները:

1991 թվականին հիմնադրվել է ICLEI Եվրոպական քարտուղարությունը՝ Գերմանիայի Ֆրայբուրգ քաղաքում: Այս ցանցին միացել են Եվրոպական 38 երկրների 175 քաղաքներ և կազմակերպություններ /ցանկը կցվում է/:

Ցանցն իր վրա վերցրել է բնության պահպանության, մաքուր ջրի պահպանության, այլընտրանքային էներգիայի կիրառման, էներգախնայողության և քաղաքներում բնակչության կենսապայմանների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման պարտավորությունները: Այդ նպատակով ցանցն իրականացնում է բազմաթիվ միջոցառումներ և կոնֆերանսներ վերը նշված թեմաներով:

Հետխորհրդային երկրներից ցանցին միացել են Վրաստանի՝ Թբիլիսի, Ուկրաինայի՝ Օդեսա, Հայաստանի՝ Հրազդան, Լատվիայի՝ Ռիգա քաղաքները և Ռուսաստանի՝ «Կիրով քաղաքի

վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության և էկոլոգիական նախաձեռնությունների կենտրոնը»:

Իր անդամների համար ցանցն ստեղծում է կոնֆերանսների, սեմինարների, միջոցառումների միջոցով հարթակ՝ փորձի և տեղեկատվության փոխանակման համար, ապահովում է անդամների միջև համագործակցություն, կապ է ստեղծում անդամների և ֆինանսավորող կազմակերպությունների միջև /օրինակ՝ ՄԱԿ, ԵՄ, բիզնես–ընկերություններ, հիմնադրամներ և այլն/:

«Տեղական իշխանությունները հանուն կայունության» ցանցի առաքելությունն է աջակցել տեղական իշխանություններին՝ հատուկ ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրի պայմաններին, գլոբալ կայունության բնագավառում հասնել զգալի բարեփոխումների:

Նշված ցանցին միանալու վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության /գրություն՝ 31.08.2012թ. հ. 1/11/11396/ և ՀՀ արտաքին գործերի նախարարության /գրություն՝ 05.03.2013թ. հ. 16/02195/ կողմից տրվել է դրական կարծիք:

Երևանն անդամակցության դեպքում տարեկան պետք է վճարի 750 Եվրո անդամավճար: Վճարումն իրականացվում է տարվա համար ամբողջությամբ՝ ցանցին միանալու ամսվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ» ՑԱՆՑԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Տեղական իշխանությունները հանուն կայունության» ցանցին անդամակցելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ» ՑԱՆՑԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Տեղական իշխանությունները հանուն կայունության» ցանցին անդամակցելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում անհրաժեշտ է նախատեսել տարեկան 750 Եվրո անդամության վճար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ